21.06. Արտոնված է՝

2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի N2 հիմնական դպրոցի 3-րդ <<ա>> դասարանի ղեկավարի հաշվետվություն

Դասվար՝ Ա. Առաքելյան

3-րդ <<բ>> դասարանում սովորում են 25 աշակերտներ՝ 12 տղա, 13 աղջիկ, 100 % առաջադիմություն ,որակը՝ 43 %: Ուստարվա ավարտին դասարանում եղել են 6 գերազանց, 4 առաջավոր աշակերտ: Կան 4 ներառված աշակերտներ:

Սիրում են մասնակցել տարատեսակ միջոցառումների, մրցույթների, վիկտորինաների:

Դասարանը դասվարի հետ անց է կացրել <<Սուրբ Ջատիկ>> խորագրով միջոցառումը, որի ընթացքում երեխաները իրենց դրսևորել են շատ լավ:

Այցելել են Ստեփանավանի Սահակ Սահակյանի անվան թանգարան, դիտել տարբեր ցուցահանդեսներ, տիկնիկային թատրոններ, կրկես, որոնք կազմակերպվել են և՛ դպրոցում, և՛ քաղաքի մշակութային կենտրոններում: Ուսումնական էքսկուրսիա է կազմակերպվել Դսեղ:

3-րդ <<ա>> դասարանի աշակերտները մասնակցել են նաև դպրոցական, տարածաշրջանի սպորտային միջոցառումներին, ստացել են պատվոգրեր: Մասնակցել են դպրոցական, դասարանային շաբաթօրյակներին:Կազմակերպվել են տեսադասեր:

Դասարանը կազմակերպված է, համախմբված, ակտիվ և պատասխանատու :

Դասարանում ձևավորվել է փախադարձ հարգանքի,փոխօգնության ընկերասիրության միջավայր:Դասարանում ձևավորվել է համերաշխ կոլեկտիվ:Աշակերտները պատրաստակամ են , և հաճույքով կատարում են բոլոր հանձնարարությունները:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կատարվել են ուսումնադաստիարակչական հետևյալ աշխատանքները՝

Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծվել են բարենպաստ պայմաններ ,միջավայր, համապատասխան կահավորում:

- Խորացվել է փոխհամագործակցությունը և փոխօգնությունը:
- Աշակերտների մեջ ամրակայվել է սերը ուսման, հայրենիքի, դպրոցի նկատմամբ: Սերմանվել է աշխատասիրություն,պարտաճանաչություն և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:
- Սովորեցրել ենք գնահատել սեփական արարքները,նկատել իրենց և ընկերների թերությունները, ժամանակին շտկել դրանք:
- Դաստիարակվել է հարգանք մեծերի նկատմամբ, ուշադրություն՝ փոքրերի:
- Կարևորվել է անձնական հիգիենան և մաքրասիրությունը:
- Քաջալերվել են օրինակելի աշակերտները , խրախուսվել նրանց ձեռքբերումները և շտկվել բացթողումները:
- Կազմակերպվել են գործնական աշխատանքներ որոնք զարգացրել են աշակերտների ճանաչողական մտահորիզոնը, կյանքում կիրառելու կարողությունները:
- Դասարանում ապահովել ենք խաղաղ, դրական միջավայր:
- Կազմակերպվել են միջոցառումներ , էքսկուրսիաներ, արշավներ, զբոսանքներ:
- Ձևավորել ենք հայրենասեր,ազգանվեր,կրթված,ընկերասեր անհատներ:
- Կատարել դասալսումներ , ծնողական ժողովներ, ուստարվա ընթացքում ամուր ենք պահել աշակերտ-ծնող-դպրոց կապը:
- Կատարվել են թեմատիկ դասղեկական ժամեր, լրացվել է կանոնավոր կերպով Դասղեկի մատյանը: